

84-3

Բ-97

1793

ՊՈԼ ԲՈՒՐՃԵ

ՄԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Վ Ե Պ Ի Կ

ԺՐԱՆՑՈՒՅԻՑ ՊԱՐԳՈՒՅԻՑ

Ն. ՅԱ.ՐՈՅ



ԹԻՓԼԻՍ

Արագատիպ Ա. Քութաթելաձէի, Նիկ. 21.

1903

9011

2003

84-3

F-97

Ար

ՊՈԼ ԲՈՒԻՐԺԵ

ՄԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Գ Կ Գ Գ

1001
1195

թ.

Ճամանակակից բարգավաճեց

Ն. ՅԱՐԱԳ



ԹԻ ՓԼԻ Ա

Արտգուղիս Ա. Քութաթելաձէի, Նիկ. 21.

1903

Дозволено цензурою, Тифлисъ, 24-го Апрѣля.
1903 года.

Երկու ժամ կար արգէն, որ հայր Շըմինան
նստած էր իւր խոստովանարանի մէջ. և այս
արժանաւոր քահանան բաւական յոգնել ձանձ-
րացել էր՝ լսելով գծուծ մեղքերի և ըստ մեծի
մասին երևակայեալ, չնչին մեղանչումների այն
երկար շարքը, որ ծանրաբեռնում է գաւառա-
ցի ծխատիրօջը խոստովանող զահէլ ու պառաւ
կանաց խիղճը:

Հայր սուրբը, որ յայտնի էր հայրական
անչափ ներող իւր յատկութեամբ, խոստովա-
նողների խղճի խայթի ամսվերջ մահրամամներ
լսող համբերութեամբ, որպէս և իւր բարձր
առարինութեամբ, տեսնում էր որ ամեն տարի
ինչքան աւելի բազմանում էին իւր բարեպաշտ
ծխականները և աւելի խնդրող-պահանջող դառ-
նում՝ նոյնքան ինքն էլ, աւազ, աւելի հեռա-
նում էր երիտասարդական հասակից:

Ցիսունուհինդ տարեկան մի տղամարդ էր
սա, որ երբէք ամրակազմ անձն չէր եղած և
որ չափազանց խիստ կլիմայում անցրած

խստակրօն մի կեանք վաղաժամ հալել մաշել
էր իրան:

Փետրուար ամսի վերջին օրերի մի երեկոյ,
Կլէւմօն-Փէռան քաղաքի բոլոր բնակիչներին
լաւ ծանօթ ֆրանցիսկեան կարդի «Մինիմ¹⁾»
կոչուած վանականների փոքրիկ եկեղեցում, իւր
խոստովանարանի մէջ սարուըռում գողում էր
ցրտից հայր Ջըմինան... Էլ խոստովանողներ շը
կային և ինըը վերջապէս մենակ մնաց. դար
ձեալ մի հինգ րոպէ անց, և ապա թէ պիտի
բարձրանար երիցատուն-բնակարանը, ուր փո-
քը ինչ տաքանալով իւր գրադարան-սենեակի
վառարանի մօտ՝ պիտի շարունակէր իւր այն
երկար աշխատանքը, որ Օվէռնի հոգեուրակա-
նութեան պատմութեանն էր վերաբերում:—
Հայր սուրբի բաղձանքն էր նուիրել այս պատմա-
կան երկին իւր կեանքի մնացած տարիները,
մանաւանդ որ սրբազն առաջնորդի խոստման
համաձայն՝ մօտակայ ժամանակում կանոնիկոսի
աւելի հանգիստ պաշտօնը պիտի ստանար:

Բայց ինչքան էլ շտապէր երիցատուն
բարձրանալու և բաղկաժոռում բազմելով դար-

¹⁾ «Կրտսերագոյնք» անուանեալ միաբանու-
թիւն. Ծ. Թ.

ձեալ իւր թղթերը ձեռք առնելու՝ որովհետեւ
խոստովանողներին ընդունում էր մինչև հինգ
ժամը — որ տակաւին չէր զարկել, ուստի և
պահնորդ զինուորի պէս հաստատուն կեցած
էր սա իւր պաշտօնի կատարման գործին. մի
և նոյն ժամանակ հաճութեամբ ականջ էր
զնում այն գերեզմանական խորին լուսվեանը,
որ հազիւ թէ ընդհատում էր եկեղեցում
գարսուած աթոռներից մէկը կամ միւսը տե-
ղից շարժելով:

Այսպիսի լուսվիւնը ապացոյց էր, որ էլ
ոչ ոք կարկի չունէր խոստովանութեան և ոք
հայր Ջըմինան ազատ էր դուրս գալու իւր
խոստովանարանից: Եւ սակայն հակառակ ահա
իւր մշտասովոր հաստատուն բնաւորութեան՝
անկարող եղաւ սա զսպել մի զգացում,
երբ բահանայի ականջին յատուկ նրբու-
թեամբ, որ լաւ տանտիկնոց լաելիքի պէս
զիտէ որոշել իւր եկեղեցու մէջ եղած ամեն
մի շառական լսեց՝ մուտքի դրան վերստին բացուի-
լը: Ճտապ բայլերով մօտեցաւ մէկը խոստովա-
նարանին, կանգնեց այնտեղ և ապա ընկնելով
ծնկների վրայ՝ կամացուկ զարկեց ցանցորմը,
որի ետև շարժուն մի փեղկիկ կար որպէս
որմակ:

Այս մօտեցողի ամօթխած և միանգամայն

շուտափոյթ ու ջղագրգիռ զարկելու ձևից և
հագուստի շփումից հայր սուրբը հասկացաւ, թէ
կին է ցանցորմ զարկողը: Եւ խոստովանահայր
Շըմինան մտածեց, թէ ահա կրկին լսելու է
երկար զրուցաբանութիւն ծիսական պահե-
ցողութեան դէմ մեղանչելու մասին, փոքրիկ
որկրամոլութեան, աննշան ստախօսութեան ու
բարկութեան մեղքերի մէջ ընկնելու վերաբեր-
մամբ և այն, որպիսիք հարիւր անդամ խոս-
տովանել էին իրան, որով և ինքն էլ երեակա-
յութեամբ ակամայ պատկերացրել էր այն
ծխականների այնշափ անմեղ, չնչին ու փանա-
րի կեանըը: Յետոյ ինքն իրան կամացուկ ա-
սաց՝ միթէ չէր կարող սպասել այս վերջին
խոստովանողը մինչև վաղուան ժամը... Եւ
այս մտածելուն պէս ինքնայանդիման մի զգա-
ցում տիրելով իրան իւր այնպիսի անդութ-
դժկամակութեան համար, սկսեց անմիջապէս
մտացի աղօթել և յետ քաշելով բանալ խոստո-
վանարանի փեղկիկը...

Թէև մթնաշաղը խտանալով երեկոյի
մութն արդէն մօտենում էր, բայց և այնպէս
հայր սուրբը իւր առջև չոքածի ստուերազիծը
նշմարելով՝ տեսաւ որ մի ջահէլ կին է խոստո-
վանողը, որի կրկնակի քողի միջով անդամ

երեսում էր, թէ ամենացաւալի շփոթման վիճակի
մէջ է նա: Եւ ահա նոյն բոպէին խոստովանահօր
վայրկենապէս ունեցած դժկամակ զգացումը տե-
ղի տուեց անմիջապէս իսկական, պաշտօնէի
պարտաւորութեան զաղափարին: Կայ իսկական
ճշմարիտ քահանայ, որպիսին էր հայր Շըմինան,
կայ և իսկական բժիշկ: Թէ մէկը և թէ միւսը
երբ ներկալ է հոգեպէս կամ մարմնապէս մի
հիւանդի մօտ, բնազդմամբ ոչնչացնում է իւր
մէջ այն ամենը, ինչ որ իւր պաշտօնին չէ
վերաբերում: — «Մինիմ» եկեղեցու այս հինա-
ւուրց հովիւր, որ հագարաւոր խոստովանութիւն-
ներ էր լսել և որ հէնց նոյն այն երեկոյին մի
տասնեակ հոգու ևս արձակումն էր տուել՝
թեքելով իւր ալէսառն զլուխը այս նոր խոս-
տովանողի կողմը, աշխատեց որ իւր արտասա-
նելի խօսքերից ոչ մէկը չը կորչի զուր տեղը.
և նոյն բոպէին ցանցորմի միջով կնոջն երեաց
հայր սուրբի կիսապէմը այնպիսի մի խորին
ու չերմեռանդ ուշագրութիւն արտայայտող,
որ կարծես թէ ինքը լինէր առաջին խոստո-
վանողը: — Ազնիւ խորշոմներով ծածկուած, ճգ-
նաւորական դէմք յիշեցնող խոստովանահօր
կերպարանքը, ուր յատակամիտ խստութեամբ
սև սև աշբերն էին փայլում, սրտի մի բարա-
խում տուեց այն կնոջը. յուսոյ թէ երկիւղի

արդեօ՞ք բախախում, ո՞վ գիտէ. և ահա կառմաց, զրեթէ շունչը կտրելով՝ սկսեց նա ասել իւր մեղան՝... «խոստովանիմ առաջի Աստուծոյ»...

Քահանայի առաջարկած մի քանի հարցումներին հազիւ հազ պատասխանելուց յետոյ՝ կինը սկսեց խօսել յուզուած, զրեթէ կարկամած ձայնով և ասել՝

«Հայր սուրբ, ձեր օգնութեանն եմ դիմում կեանքիս զարհուրելի ըոպէին. ես շուտով մի ոճիր եմ գործելու՝ այնպիսի մի ոճիր, որից յետոյ ինքս էլ կը մեռնիմ... Մի հարցնէք ինձ, հայր սուրբ, թէ ինչ ոճիր է այդ. ես ձեղ չեմ ասիլ, բայց պէտք է գործեմ, ես պարտաւոր եմ գործելու, աւելացրեց նաև պղնդելով ես պարտաւոր եմ խօսքի վրայ: Սակայն չը նայելով այս բանին, շարունակեց կինը, ես վատթարներից չեմ, հայր սուրբ: Տեսնում էք, տակաւին հաւատ ունիմ և ահա եկայ աղաշել-պաղատել ձեղ, որ նախապէս արձակէք ինձ գործելու մեղքիցս, որպէս զի յաւիտեան դատապարտուած չը մեռնիմ... այն... Այս իմ արած հայցումն անմիտ մի բայլ է թւում, որովհետև զիտեմ և խոստովանում եմ, թէ ոճիր եմ գործելու, և զուր ինձ կ'ասէք իսկոյն՝ մի՛ գործեֆ... Բայց եթէ կարողանայի պատմել

ձեզ, հայր սուրբ, բոլորը՝ այնժամ կ'իմանայիք գուր իմ թշուառութեան չափը, կը խղճայիք և կը գիտնայիք նոյնպէս, թէ անփախչելի է ինձնից այս ոճիրը... Ո՞հ, հառաչեց նա, ճակատը դէմ տալով ցանցորմին՝ որպէս անկարող տանելու իրան ճնշող ցաւի ծանրութիւնը, և հեկեկանքը կատարելապէս յուզելով նորան՝ ոհ, ոհ, յուսահատ հառաչանին էր կրկնում աւելացնելով՝ Տէր Աստուած օգնիր ինձ»...

Թէև հայր Զըմինան իւր պաշտօնը կատարել էր միշտ մի այնապիսի միջավայրում, ուր գործած մեղքերը չնշին մեղքերի կարգից էին, սակայն եղել էր երբեմն, որ սորան խոստովանել էին օտարութի գաղտնիքներ ես: Մարդկային հոգին յուզուելով իւր խորքում՝ անդրադարձում է միշտ խենդութեան ու թշուառութեան մի և նոյն շարագուշակ ձայնը, որ հանգամանների ամենաճշուած խելդութեան մէջ անզամ նոյնն է: Եւ բահանան այն բանով ես բժշկի է նմանուում, որ սորա պէս նա էլ երբէք չէ զարմանում մասնաւոր անհատի ախտացեալ հիւանդութիւնը, անկանոնութիւնը ուշի ուշով քննելով՝ զէպքեր, որ ամեն մի այլ մարդուն հրէշային կ'երևային. բայց այնուամենայնիւ հինաւուրց խոստովանահայրը զարհուրած մնաց այն բարոյական ողորութեան վրայ, որ

ցոյց էր տալիս երիտասարդ կնոջ այնպիսի
վարմունքը: — Ի՞նչպէս է որ այս դժբախտ ա-
րարածը, որի ոգեսպառ շունչը վերջին ծայր
տափնապ է հնչում, կարողանում է այնքան
գութ և այնքան մոլորութիւն իրարու միացնել,
և հաւատալով Աստուծոյ թուղութեանը, որ և
խնդրում-հայցում է, մի և նոյն ժամանակ մտա-
ծում, ասում է թէ ոճիր և ինքնասպանու-
թիւն պիտի գործէ, որովհետև հինգ այս են
նշանակում խոստովանքի մէջ ասած նորա խօս-
քերը. — Նա ուզում է գործել մի ոճիր և ապա
ինքն իրան սպանել: Ի՞նչ ոճիր պիտի լինի
արդեօք: — Առաջին նուագ քահանան մտածեց,
թէ խանդանքի եղեռնական մի դէպք է լինելու:
Արդեօք ամուսինը և կամ սիրահարը դրժել-դա-
ւաճանել են երիտասարդ կնոջը: Ի՞նչ կարիք
կար իմանալու: Նորան դաւաճանել էին և նա
պատրաստում էր այժմ՝ վրիժառու լինել: Կր-
քերի այսպիսի վերջին ծայր տափնապալից վի-
ճակի մէջ միակ դարձանը ժամանակ վաստա-
կելու կամ բանն ուշացնելու մէջ է. հայր Շը-
մինան գիտէր այս, և ահա սկսեց սա իւր խորա-
թափանց սփոփանքի խօսքերով պատասխան
տալ կնոջը և ասել՝

— Այդ քո խնդրածը, որդի, անկարելի է:
Դու լաւ գիտես, որ մեղքի մասին մտածելն

անդամ երբ պատրաստում ես գործել, արդէն
մի մեղք է: Դու այդ պէտք է գիտենաս, որով-
հետեւ մինչի այսօր բրիտոնեայ ես մնացել:
Ինչպէս որ անբաւ է Աստուծոյ ողորմութիւնը,
նոյնպէս և պահանջում է մեզնից, որ մենք
էլ զգանք մեր մեղքերը, որպէս զի նոյն ո-
ղորմութիւնը ինչ մեզ վրայ: Այդ միտքը, որ-
դի, որ դու ունեցար և եկար, ներկայացար
Աստուծոյ գատաստանին՝ մի չնորը է, Աս-
տուածային մի մեծ չնորը, և մի թողնիր որ
վերանայ քեզանից: Զզջա, որդի, զզջա որ նա-
խամտածել ես կատարել մի գործ, որին ինքդ
ոճիր անունն ես տալիս: Փառք տուր Աստու-
ծուն, որ մտածել ես միայն և չես կատարել:
Հրաժարուիր այդ մտածումից քո բալոր հոգով
սրտով և առա ինձ հիտ միասին՝ «և մի տա-
նիր զմեզ ի փորձութիւն»...

Քահանան նկատեց, որ կինը ընդդիմա-
պիր մի զայրոյթով շարժեց զլուխը և անընկճե-
լի կամք արտայայտող գողգոջիւն շեշտով պա-
տասխանեց՝

— Ոչ, հայր սուրբ, ի զուր է այդ: Ես
որոշել-վերջացրել եմ, ես կը գործեմ այն ինչ
որ մտածել եմ և ապա կը մեռնիմ, կը մեռնիմ
յաւիտեան դատապարտուած, այն, դատապար-
տուած... դատապարտուած... կրինում էր նա:

— Վերապարձիր վաղը, ասաց խոստովանահայրը, որ կնոջ հոգեկան բորբոքումն աւելցած տեսնելով առաւել ես երկիւղ կրեց. մինչև վաղը ես քո մասին խորհուրդ կը հարցնեմ իմ իշխանաւորներից, շարունակեց խոհեմարար, և կարելի է որ...

— Իսկ եթէ վաղը չը կարողանամ վերադառնալ, եթէ ոճիրն արդէն զործած լինիմ, ընդհատեց կինը, և ապա շարունակելով... ես ինձ քաշ տուի, ասաց, մինչև այստեղ այս երեկոյ վերջին ճիկս թափելով, որպէս զի մտածած զարհուրելի զործիս համար նախապէս թողութիւն խնդրեմ ե... Ո՞չ, հայր սուրբ, ես կորած եմ, կոկծաց նա՝ թուլացած յետ ընկնելով խոստովանաբանի պատի վրայ. Սստուած ինձ մերժում է, որպէս մերժել է այլոց: Ո՞րտեղից գտնեմ արդեօք օգնութիւն. ոհ, ինչ տանջում եմ... ի՞նչպէս տանջում եմ...

Հայր Ջըմինան մի վայրկեան լուռ մնաց. սա նորից նայելով այն օտարոտի խոստովանողին՝ կամեցաւ զուշակել այն ինչ որ այժմ կասկածում էր: Կնոջ կերպարանքի այլայլութիւնը միայն յուզմունքից չէր առաջացած. խոստովանահայրը նշմարեց նորա երեսի վրայ այն դաժան ու կծկուած տեսրը, որ յութիւնն է տալիս կանանց: Լքուած, թուլացած յետ ընկնե-

լիս այս անծանօթուհին՝ կիսով չափ յետ ձգելով անփութութեամբ իւր վերարկուն, որով փաթաթուած էր ինքը, երեացրել էր իւր բարեձե կազմուածքի տարածեութիւնը: Եւ դըժքախտի երիտասարդութիւնը, նորա խեղճ, բայց պարկեշտ հագուստը, քողի հաստութիւնը, եկեղեցի յարամբի ներս մտնելու ժամը աշկարայ ցոյց էին տալիս, թէ նորա յուսահատութեան խոկական պատճառը ոչ թէ սիրոյ խանդանքն էր եղել, որպէս նախ կարծեց հայր սուրբը, այլ ամօթը այն մայրացող օրիորդի, որ մօտ է ծնելուն: Այս յայտնութեան վրայ՝ հայր Ջըմինան սաստիկ նեղանալով, զգաց իւր հոգու մէջ քահանայութեան պաշտօնի քոլոր պատասխանատուութիւնը: Սա արդէն ակներեն հասկացաւ, որ եթէ փորձէ հարցնել աւելի և բան իմանալու նորա դրութիւնից՝ ամօթից զայրացած յանկարծակի մի յուզմունք կը շտապեցնէ նորան—առաւել հոգեպէս, քան մարմնապէս հիւանդ այն արարածին — անմիջական որ և է ոճիր զործելու: Մի և նոյն ժամանակ նորա ասած յանդուզն, հերետիկոս մտադրութիւնն իրագործելու գաղափարը բոլորովին սարսկցնում էր խոստովանահօրը: Բայց գաւառացի ծխատիրոջ այս բարեմիտ ու ազնիւ պաշտօնատարը խորին հաւատի մարդ լինելով՝

այն հաւատացեալներից էր, որոնց շրթունքները
ամեն մեծ փողձանքների միջոցին վեր են առա-
քում իրանց վերջին աղօթքը՝ ասելով — «ի
ձեռն քո, Տէր, աւանդեմ գհոկի իմ»... Եւ հայր
Շըմինան իւր հոգու բոլոր ջերմեռանդութեամբ
աղօթելով առ Սստուած՝ լոյս և ներշնչում
հայցեց ի վերուստ, որպէս զի գուշակէ և ասէ
յուսահատ կնոջը այն բարերար խօսքը, որով
կասեցնել կարողանար այնպիսի այլայինալ հո-
գու մտածած կրկնակի ոճիրը։ Հայր սուրբին
թուաց թէ երկնային մի շնորհը անկասկած
առաջնորդել էր երիտասարդ կնոջը, որ եկեղե-
ցի էր եկել և իրան խոստովանահօրը ներկայա-
ցել։ Այսպիսի վայրկենական՝ կայծակի արագու-
թեամբ անցած մտածութեան մէջ հայր Շըմի-
նան հասկացաւ նոյնպէս, թէ ապրելու ոէրը և
յոյսը բոլորովին չէին կտրուել այն կնոջ սըր-
տից։ Երկում էր որ մայրացող օրինրդը տա-
կաւին սիրում էր կեանքը և մինչև անզամ իւր
արգանդում մարմնացած էակին, վասն զի յու-
թեան առաջին նշանները զգալով ոչ ինքն ի-
րան էր սպանել և ոչ վիժեցնող մանկաբարձու-
հուն դիմել... Հայր սուրբը աղօթեց կրկին՝
ջերմեռանդ երկիւղածութեամբ առաւելեալ և
գորովագութ ու միանդամայն անաշառ ձայնով
ասաց՝

— Ահա, որդի, ես խնդրում եմ Սստու-
ծուց, որ նախապէս ներէ քեզ այն մեղքը, որ
դու ուզում ես գործել... սակայն մի ան-
դառնալի պայման կայ կատարելու...

— Ի՞նչ պայման, հայր սուրբ, հարցրեց
կինը։

— ...Սպանելուց առաջ՝ Ժիծ տն'ւր դու
Առրան... պատասխանեց խոստովանահայրը՝ ա-
սես երկիւղ կրելով իւր արտասանած սեպհա-
կան խօսքերից, և փոխանակ լսելի ձայնով ա-
սելու արձակման աղօթքը՝ կարծես մրմնջաց...
«Ողորմեսցի քեզ մարդասէրն Սստուած և»...
և իւր դողդոցուն ձեռքով վրայ քաշեց, փակեց
խոստովանարանի ցանցորմի փեղկիլը...»

Քահանայի ասած այս կորովամիտ խօս-
քը այնպէս ապշեցրեց, տապալեց կնոջը, որ
անկարող լինելով շարժուիլ տեղից՝ մնաց այն-
պէս։ Տեսնելով որ հայր սուրբը գուրս է գա-
լիս խոստովանարանից զարհուրեց նա՝ մտածե-
լով, թէ ահա կը կանգնի այնտեղ և կը սպա-
սէ իրան, որ յետոյ մօտենայ և խօսի։ Բայց
ոչ, քահանան հեռանում էր՝ զնալով խորանի
կողմը։ Այնտեղ մի վայրկեան ժամաշապիկը
հանելուց յետոյ, ասում էր ինքն իրան կինը,
նորից գուրս կը զայ, կ'երեայ եկեղեցու սիւնե-
րի միջով և առաջը կը կտրէ իրան այն մարդը,

որ այժմ զիտէ իւր գաղտնիքը։ Այս միտքը ոյժ տուեց երխտասարդ կնոջը, որ վերկենայ։ Նորան թուաց, թէ հինց իսկոյն կը ծնէ այնտեղ սառը քարերի վրայ այն եկեղեցու, ուր մի ամսից ի վեր՝ յլութեան վերջին ամսից ամեն երեկոյ յաճախել էր ինքը՝ առանց սիրտ անելու խոստովանել այն ինչ որ վերջապէս ասաց, խոստովանեց։ Հայր սուրբի պայման դրած... «սպանելուց առաջ»... խօսրը յիշելով՝ մայրացող օրիորդը զգաց իւր արգանդում — պապայ ըրդեսպանի արգանդում, — թէ շարժուեց խաղաց ողորմելի ծնանելին՝ ասես իմանալով եղենական ասացուածը իւր մասին։ Քանիցս անգամ սորա ոտիկների ցաւագին հարուածները կոկծալի կերպով զգացել, իմացել էր իւր զգայիմն արգանդի ներսը Յուլիանէն — այս էր այն կնոջ անունը, — բայց երբէք այնպիսի մի յուզմամբ չէին եղել այն հարուածները, ինչպէս այդ վայրկենին։ Յենուելով պատերին՝ կարողացաւ նա դուրս զալ եկեղեցուց և հրապարակի վրայ կեցած միջին Փրանսիայում բանող «բեռլինդօ» կոչուած կառքերից մէկը կանչելով մի դատարկ կառք նստեց։ Վալուայի սուր քարերով շինած սալայատակի վրայ զլորուելով այն կառքը՝ այնպիսի սաստիկ ցնցումներ ու մարմնական տանջանքներ պատ-

ճառեց խեղճին, որ րիշ էր մնում ազագակէր ցաւից...

1001
1195

Համելով այն աժանագին հիւրանոցի գըծուծ սենեակը, ուր հինգ շաբաթ առաջ՝ երբ այլ ևս անկարելի էր ծածկել իւր յլութիւնը, ապաստանուել էր՝ մտաւ այնտեղ, պառկեց անկողնում և ապա թէ փոքր ինչ հանգստութիւն զգաց, եթէ միայն հանգստութիւն խօսրը կարող է յարմարուիլ այսպիսի մի թշուառութեան։ Նորա արդէն վառած ճրագի լոյսը տարուբերուելով՝ ազոտ լուսաւորում էր այն սենեակի պատերի գունաթափ պաստառը, հատ ու կտոր մնացած ու զրյու կորցրած երբեմն գունաւոր կարմրափայտէ կարասիքը՝ իւր նոյնպէս գունաթափ երեսրով, և կարկատած թաղքէ կապերտը, որ հազիւ թէ ծածկում էր ցեցկեր աղիւսներով յատակած գետինը։ Բայց ինչ կուղէ լինէր այն սենեակը՝ տառապանքի ու խեղճութեան այնպիսի տեսարանով հանդերձ, Յուլիանէի համար դարձեալ մի ապաստարան էր։ Դողբողալով ցրտից՝ կծկում էր նա անկողնում, որի բամբակէ կարկատած վերմակի ու բարակ ծածկոյթի հաստութիւնը կամննալով աւելացնել թափել, փռել էր իւր վրայ իւր ցընցոտի հագուստները նոյնպէս։ Դոնից լսում էր, թէ ինչպէս հիւրանոցի կենող-վարձւորները ծի-

ծաղ ու աղաղակ բարձրացնելով՝ կանչում, անց ու դարձ էին անում, և երեխաճաշի ժամը լինելով՝ շտապում էին իջնել սեղանատուն։ Մէկը մինչև անգամ սխալուելով՝ ուզում էր բանալ, մտնել Յուլիանէի սենեակը, որ իւրն էր կարծում, սակայն նկատելով դրան ճակատի համարը՝ հեռացաւ և հայնոյանք թափեց։ Հիւանդը վախեցաւ, դողաց թէ մի գուցէ բաւականին ամուր չէ իւր դրան ֆականքը. ուստի և չը նայելով իւր արդանդի բեռնուած ու ճնշող ծանրութեանը, հազիւ հազ կարողացաւ վերկենալ անկողնուց և իւր սնդուկը դէմ դնելով դրանը, որ աւելի ամրացնէ, կրկին անկողին մըտաւ՝ սառած-պալած. և երեխան նորից շարժուեց-խաղաց մօր արդանդում այնպէս սաստիկ ցնցմամբ, որ Յուլիանէին թուաց, թէ ահա ժամանակ է... հիմա կը ծնէ... Եւ սպասեց... Յաւը դադարեց, բայց այն ցնցման զատումով իւր բարոյականի կապը կտրած զգալով՝ սկսեց լաց լինել, անվերջ-անսրոշ և լուռ-մուռ լաց լինել...

Տենդն արդէն բանել էր նորան. մտքերն այնպէս խառն անցնում, դառնում էին նորա ուղեղում և երակներն այնքան խիստ զարկում, որ կարծում էր, թէ ահա կը պայմէ իւր զըլուխը. Այն անշուր արկածի դէպքերը, որ բե-

քել, հասցրել էին իրան այս աղետաբեր ժամին, մի առ մի պատկերացնում էր Յուլիանէի գրգռուած յիշողութիւնը։ Զրում խեղդուողների պէս նորան երեցաւ յանկարծ իւր անցած կեանքի ամբողջ պատկերը. յիշելով իւր մանկութիւնը՝ մտաբերեց Փարիզի Սէն Ժակ փողոցում եղած այն տիրատես տունը, որի ամենավերին յարկում-բնակում էին իրանք, և որտեղից հեռու չէր Լուդվիկոս մեծի լիկէոնը, ուր հինգերորդ դասատան դասախոս էր երեմն իւր հայրը։ Խնքը՝ Յուլիանէն և իւր միւս քոյրն ու եղբայրները չորս հոգի զաւակներ լինելով՝ հազիւ թէ կառավարում էին իրանց համալսարանական հօր փոքրիկ ոռնկով։ Եւ ինչ ողորմելի բան է իրաւ, օրիորդ անունը կրել և մարդու գնալիս չ'ունենալ այն օժիտն անգամ, որ ստանում է որ և է երկրագործի աղջիկ և կամ իւր բաժինն առնող այն առողջ ու զուարթ գեղջկուհին, որ ոչ ուսում կրթութիւն ունի, ոչ գաշնամուր է նուազում և ոչ պատմութիւն ու օտար լիզուներ է սովորում, բայց որ մի և նոյն ժամանակ անկարելի ու վտանգաւոր բաներ էլ չէ երազում։

Յետոյ յիշեց Յուլիանէն իւր մօր մահը և ապա՝ հետզհետէ իւր կրտսեր քրոջ, երկրորդ եղբօր և վերջապէս իւր հօր մահը... Էլ տուն-

ընտանեկան կեանք չունէին իրանք, ուր գնար, ինչ անէր. իւր միակ հարստութիւնը վարժուհու դկայականն էր, որով կարողացել էր դաստիարակուհու պաշտօն ստանալ մի հարուստ ընտանիքում՝ իւր հանգուցեալ հօր մի պաշտօնակցի աջակցութեան չնորհիւ... Եւ միթէ դիտէր, հասկանում էր, թէ ինչպէս էր եղել, որ այն հարուստ ընտանիք յաճախող բառօն դը Քէոն երիտասարդ պարոնը գրաւել, հրապուրել էր իրան...

Ճքեղութեան մէջ անցած կեանքի մթնոլորտը շատ աղետալի փորձութեանց պատճառ է դառնում: — Եւ չը նայելով իւր ծնողների բարեսիրութեամբ մեծացած լինելուն՝ քանի՛ քանի տհաճ ընդհարումների ենթակայ էր եղել այնուշետև Յուլիանէն, որով և ինքն էլ այնպէս վատթարացել էր: Ի՞նչ անարժան զգացում. ների ակամայ ու անընկճելի աճումն էր նա ունենում արդեօր իւր սրտում, երբ այն հարուստ ընտանիք այցելող իւր հասակակից կանայք բարձրանալով մինչև երեխայոց վարժասենեակը, մտնում էին այնտեղ և համբուրում իւր փորբիկ աշակերտուհներին: Այս կանանց յարդուզարդի բուրմամբ չնչումը, զուարձութեան ու քմախորժանքին նուիրուած սոցա ազատ ու սիրուն կեանքը և սրանցից ոմանց գաղտնի սի-

րահարութիւնը փչացնում, ապականում էին Յուլիանէի սիրուը: Իսկ յետոյ երեկոներին, երբ իջնում էր գահին և դը Քէոն պարոնը սկսում էր զբաղուիլ նորա հետ խօսակցութեամբ, արդեօր այն ոյժն ու զօրութիւնն ունէր, որ բացէ ի բաց մերժէր այս ազնուականի քծնութիւնը, ինչպէս որ պարտաւոր էր մերժելու: Ոակայն ոչ. Յուլիանէն այս դէպրում նմանուել էր այն չափազանց նախանձոտ կանանց, որոնց հաճելի է որ իրանց սիրեն ընկերութեան մէջ յաջողութիւն ունեցող երիտասարդ մարդիկ: — Նա կարծել էր թէ իրան սիրում էր այն մարդը, որին ինքը հաւատացել էր, բայց որ երբէր չէր ասել թէ կ'ամուսնանամ քեզ հետ: Եւ այսպէս շարունակուելով հրապուրել և հրապուրուիլ, ժամագրել և տեսնուիլ նորա հետ՝ բանն այնտեղ էր հասել որ դը Քէոն երիտասարդը վերջը սիրահար էր արդէն դարձել Յուլիանէի. և ոս երկու ամիս շարունակ սիրոյ արբեցութեան և անշափ ու միանդամայն անմիտ ուղախութեան մէջ էր եղել՝ ինքը միան: Եթէ նոտ սիրել էր սորան՝ թէկուզ մի ժամ անգամ, միթէ այնշափ անզութ կը լինէր որ այնպէս յանկարծ, անարդական կերպով թողնէր լքանէր սորան. լքումն, որ նոյնքան խիստ ու անագործյն էր, որքան և անբացատրիլ: — «Ես

այն կէտին է եկել, որ իւր գօտին այլ ևս չէ հասնում իրան՝ իւր աւագ եղբօր հիւանդութիւնն էր պատրուակել, որ Լիկէոնի կըսսեր դասախոս էր Կլէոմօն Փէռան քաղաքում, ուր և ճանապարհ ընկել, ժամանել էր: Համելով երկաթուղու կայարան՝ սիրտ չէր արել Յուլիանէն, որ վնայ իւր եղբօր մօտ, այլ մի կառք նստելով՝ զնացել, իջել էր որ և է մի առանձնացած հիւրանոց: Այստեղ մի սենեակ վարձերով կեղծ անոնով յայտնուել-զբուել էր ցուցակում, և վեց շաբաթից ի վեր սպասում էր պաշարուած իւր այն ոճիր զործելու մլարով, որի համար կանխապէս արձակումն խընդրեց քահանայից: Բան է, եթէ բախտն այնպէս բերէ, մտածել էր Յուլիանէն, որ երեխան ժամանակից առաջ ծնուի և չապրի՝ ինքը... ինքը կ'ապրի և իւր պատիւն էլ աղատուած լինելով՝ կը կարողանայ բարենորոգել իւր կեանքը իւր այս միակ սխալանքից յետոյ... իսկ եթէ ժամանակին ծնուի երեխան և կենդանի մնայ՝ ինքն էլ, երեխան էլ՝ երկուսը միասին կը սպանուին, կը մնանին. որովհետեւ եթէ ծնանելին աղջեկ է լինելու՝ ինչու համար պիտի ապրի և ժամանակով իւր մօր պէս կամ աւելի վատթար վիճակ պիտի ունենայ. իսկ եթէ արու զաւակ լինի՝ անշուշտ նոյն վի-

քեզ այլ ևս չեմ սիրում... իմ մեղս չէ... Ահա թէ ի՞նչ խօսք և ի՞նչպէս էր կարողացել արտասանել այն մարդը իւր բերնով, որով այնքան զերմ համբոյրներ էր տուել երիտասարդ աղջկան...

Յուլիանէի մտքով անցած պատկերները հետզհետէ աւելի պարզում, աւելի մօտենում էին իւր սիրահարութեան այն մոլեալ օրերին, երբ զգալով իւր զարհութելի դրութիւնը՝ ոգով ընկճուել, իմացել էր թէ յդի է ինքը: Եւ այսպիսի արհաւերըի մէջ գտնուելով դարձեալ այնչափ հպարտութիւն էր ունեցել, որ մի վայրկեան անգամ չէր մտածել, թէ կարող է դիմել իրան հրապուրովի օգնութեանը՝ այն մարդու, որ չէր էլ հաւատացել թէ ինքն է Յուլիանէի առաջին սիրահարը: Այս խօսքը նա դարձեալ համարձակուել, կրկնել էր սորան իրանց մտերմութիւնը խզելու միջոցին... Ի՞նչ էր կամեցել արդեօր ասել այսպէս խօսելով:—Այն որ աղջկայ անունն արդէն առաջուց կոտրած-աղարտուած բամբառէ... և Յուլիանէն լուել էր, էլ ոչինչ չէր պատասխանել նորան: Բազմաթիւ օրեր անցնելով սաստիկ նեղութեամբ՝ որշափ հնարաւոր էր, կարողացել էր սա ծածկել իւր դրութիւնը իւր աշակերտուհիների ծնողաց հայեացքից: Բայց երբ տեսել էր թէ յդութիւնն

ճակին կենթարկուի, ինչ որ իւր հայրն ու եղբայրն ունեցան, որոնց տաժանակիր քաղաքացու կեանքի թշուառութիւնները շատ լաւ յայտնի էին իրան՝ Յուլիանէին: — Ոչ, այն դըժքախտները, որոնք փողի տէր չեն և կամ ոչ բանուոր և ոչ գիւղացի, աւելի լաւ է որ չը ծնուին երբէք, և կամ ծնուելուն պէս՝ մեռնին իսկոյն...

Մտքերի այսպիսի շփոթութեան միջոցին ահա նորից վերսկսեց ծննդականի ցաւը՝ աւելի սուր, աւելի խթիչ կերպով և այնքան անտանելի ու դառնակսկիծ, որ զալարուելով Յուլիանէն իւր ողորմելի մարմնով՝ իւր բարձն էր կծոտում, որպէս զի չ'աղաղակէ... Մօտեցաւ, հասաւ երկունքի վերջնական շրջանն ահա... Թէ մըքան պիտի տեէ արգեօք այս մահացու տափնապը, որ գիմացկուն ուժով կարողանում է տանել ծննդականը՝ լսելի չ'անելով իւր լալահառաչ հեծեծանքը այն գաղտնապահ սենեակի չէմքում անզամ, անկարող է ասել ինքը: — Մի վայրիկան ցաւն այնպէս վերջին ծայր սաստկացաւ, որ ուշաթափի պէս ընկած Յուլիանէին թուաց թէ մեռնում է ինքը... Եւ նոյն բոպէին եկաւ, ծնուեցաւ երեխան:

Առաւոտ էր՝ Օվէքն գաւառին յատուկ ցաւրտ

ու ամպամած մի առաւոտ, որի աղօտ լոյսը թափանցելով վարագոյների միջով՝ ընկնում էր մահճակալի վրայ: — Ահաւասիկ Յուլիանէն և իւր նորածինը իւր առջե: Վերջնական տանջանքից յետոյ ուշքի գալով՝ զգաց նա թէ կենդանի է երեխան, որին դեռ չէր շոշափել, ձեռք տուել: Իւր այն սոսկալի ոճրի դիտումն զարձեալ չէր հեռանում Յուլիանէի մտքից: — «Ամենից լաւ կը լինի, մտածում էր, բռնեմ իսկոյն, բերանը փակեմ ու իսեղգեմ: Եւ ինչ, բաւական է որ ձեռքս փոքր ինչ շարժեմ միայն և բռնեմ...» Բայց ձեռքի այսպիսի թեթև շարժման համար անզամ էլ ոյժ չունէր ինքը: Երկունքի անհնարին տանջանքը այնպէս ուժասպառ էր արել նորան, որ միայնութեան մէջ իւր դժնդակ ծննդաբերութեամբ կորցրած արեան հետ միասին՝ ասես կամքն էլ էր կորցրել: Հիւրանոցի հազիւ արթնցած կենողվարձւոների ու դեռ սակաւամարդ առընթեր հրապարակի լուսութեան միջոցին Յուլիանէն լսեց յանկարծ նորածինի սուր և միանգամայն թոյլ ճիշն ու լալիւնը, որ սթափեցրեց նորան իսկոյն քնէութեան մէջ ընկլմուած իւր թըմքութիւնից: «Ապա, ասաց ինքն իրան, պէտք է որ հիմայ գործեմ»... Եւ վերցնելով երեխան սարսուռով՝ շոշափեց, տարաւ-բերեց իւր


մատները այն քնքշիկ՝ մայրական արգանդից թացուած ու գաղջ մարմնի վրայ, որ և կամեցաւ տեսնել... Առաւօտուայ այն աղօտ լուսով նախեց, տեսաւ թէ... աղջիկ է այն անմեղ ու անձեւ արարածը, որ արդէն շարժում էր ոտիկները, բաց ու խուփ էր անում աշխիները և այս ու այն կողմ տանում, «դէմ – անում» շըրթնիկները... Յանկարծ, նոյն ակնթարժում Յուլիանէի ականջին մտաւորաբար լսելի եղաւ խոստովանհօր ձայնը, որ ասում էր իրան՝... «սպանելուց առաջ՝ ծիծ տնւր դու նորան»... Եւ ահա հնազանդութեամբ, գրեթէ սարկօրէն յետ քաշեց շապիկը, բացեց իւր նիհար գիրկը և մօտեցնելով ստինքը նորածնի բնազգուն բերնին՝ կպցրեց, տուեց պտուկը, որ նախ վարանեցաւ երեխան բռնելու և որ ապա սկսեց ծծել ազահութեամբ: Մայրն էլ իւր մատներով հպում-ճնշում էր ստինքը՝ օգնելով նորածնի տակաւին անշնորհը ծծմանը: Եւ որշափ մայրական կաթը ծծում-անցնում էր այն մարմնում, որ իւր մարմնից էր ելած, նոյնշափ էլ Յուլիանէի աշքերը լցում էին արտասուրով՝ քաղցրահոս ու բարերար արտասուրով, որ լուանում էր նորա վիշտն ու յուսահատութիւնը. և այսպիսի լացի ու հեկեկանքի հետ սկսեց նա ահա արտասանել մըմնչալով՝ «՛հ, աղջի-

կըս, որդիսա... Եւ փոխանակ խեղդելու այս ողորմելի ու թշուառ արարածին՝ կաթոզին սիրով շարժում, որորում էր սորան մայրը...

Քահանան իրաւունք ունէր, այն, արձակումն տալու այս կնոջը. սա արդէն փրկուած էր կրկնակի ոճիր գործելուց:

Վ Ե Ր Զ





1793

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1695807

Ն. Յարոյի առանձին հրատարակած աշխատությանը:

۱۰۴

1. Հայոց մամնվը Ոռւսաստանում և
Կովկասի մէջ (սպառուած) . . . —
 2. Նկարներ (Ճաղկաքաղ իմ նամակ-
ներից) — 50
 3. Մի խոստովանութիւն, (վեպիկ)
Փրանս. թարգմ. — 15

Գիսն է 15 դոկ.